

**«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**

Համախմբված ֆինանսական
հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն

2018թ. դեկտեմբերի 31

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավարությանը և հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը՝ առ 2018թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի համախմբված ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական արդյունքը և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ASATRYANS LLC
Sakharov Business Center,
48/1 Nalbandyan street, 5th floor,
Yerevan 0010, Armenia
T. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
E-mail: general@asatryans.com
www.asatryans.com

ԱՄՍՏՐՅԱՆՍ ՍՊԸ
Սախարով Բիզնես-Կենտրոն,
Նալբանդյան փող. 48/1, 5-րդ հարկ,
ՀՀ, Երևան, 0010
Հ. + 374 60 53 23 23
+ 374 99 54 33 88
Էլ. huught general@asatryans.com
www.asatryans.com

A Member of Kreston International | A global network of independent accounting firms

Կրեստոն Ինտերնեյշնլի անդամ | Անկախ հաշվապահական ընկերությունների գլոբալ անդամ

Այլ հանգամանքներ

Ցանկանում ենք ուշադրություն հրավիրել այն փաստին, որ ներկայացված համադրելի տվյալները, հիմնված են Հիմնադրամի 31 դեկտեմբերի 2017թ. դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալների վրա, որոնց աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 20 մարտի 2018թ. եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք:

Որպես 2018թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի մաս՝ մենք իրականացրել ենք համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություն 30-ում ներկայացված ճշգրտումների աուդիտը, որոնք կիրառվել են նախորդ տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների տվյալները վերահաշվարկելու համար: Մեր կարծիքով, նշված ճշգրտումները տեղին են և կիրառվել են ըստ պատշաճի: Մեզ չի հանձնարարվել իրականացնել Հիմնադրամի 2017թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, դիտարկում կամ կիրառել այլ ընթացակարգեր այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հետ կապված՝ բացառությամբ նշված ճշգրտումների, այդ իսկ պատճառով, մենք կարծիք կամ որևէ այլ հավաստում չենք արտահայտում Հիմնադրամի 2017թ. համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Հիմնադրամը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի համախմբված ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն համախմբված ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման արձեղիստության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյեք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևավորել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են միմյան վրա՝ աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատուն Ալբերտ Ասատրյանն է:

Սերգեյ Ասատրյան

Տնօրեն


Ալբերտ Ասատրյան

Առաջադրանքի պատասխանատու

27 հունիսի 2019թ.

ԱՍԱՏՐՅԱՆՍ ՍՊԸ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ		2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (վերահաշ- վարկված)	2017թ. հունվարի 1-ի դրությամբ (վերահաշ- վարկված)
	Ծնթ.			
Ակտիվներ				
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>				
Հիմնական միջոցներ	4	49,373,166	49,304,992	49,318,707
Ոչ նյութական ակտիվներ	5	26,163	31,247	35,062
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների համար		1,879	494,643	8,932
		49,401,208	49,830,882	49,362,701
<i>Ընթացիկ ակտիվներ</i>				
Պաշարներ	7	599,471	186,332	141,737
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	779,986	358,467	547,629
Կարճաժամկետ ավանդներ բանկերում		4,881,988	4,280,830	2,681,474
Դրամական միջոցներ և համարժեքներ	9	659,786	959,151	930,044
		6,921,231	5,784,779	4,300,884
Ընդամենը ակտիվներ		56,322,439	55,615,661	53,663,585
Ջուտ ակտիվներ	29	44,097,591	42,672,851	40,938,526
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>				
Հետաձգված եկամուտ	12	4,938,607	5,079,643	5,029,340
Հետաձգված հարկային պարտավորություններ	6	5,692,184	5,889,687	5,744,663
		10,630,791	10,969,330	10,774,003
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>				
Հետաձգված եկամուտ	12	394,639	389,942	385,720
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	11	842,563	1,286,547	1,372,216
Պահուստներ	10	216,300	261,780	188,524
Շահութահարկի գծով պարտավորություն		140,555	35,211	4,596
		1,594,057	1,973,480	1,951,056
		12,224,848	12,942,810	12,725,059
Ընդամենը Ջուտ ակտիվներ և պարտավորություններ		56,322,439	55,615,661	53,663,585

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 27 հունիսի 2019թ.

Գեղամ Գևորգյան
Ռեկտորի ժ/պ

Ռաֆիկ Գրիգորյան
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված
ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 73-րդ էջերում ներկայացված
կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերահաշ- վարկված)
Ծմք.		
Ուսման վարձերից եկամուտ	6,792,332	7,167,508
Եկամուտ շնորհներից	3,174,447	3,950,687
Այլ եկամուտ	189,698	205,059
13	10,156,477	11,323,254
Աշխատակիցներին հատուցումներ Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(6,789,909)	(6,902,638)
Մաշվածություն և ամորտիզացիա	(136,596)	(177,355)
Հեռահաղորդակցության ծախսեր	(723,617)	(894,374)
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	(19,458)	(19,317)
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	(1,302)	(3,379)
Ապահովագրական ծախսեր	(143,011)	(125,296)
Կրթաթոշակի գծով ծախսեր	(201,907)	(207,400)
Գրասենյակային ծախսեր	(828,060)	(1,023,391)
Այլ ծախսեր	(446,285)	(407,654)
Այլ եկամուտ	359,707	262,548
Գործառնական գործունեության արդյունք	1,226,039	1,824,998
Ֆինանսական եկամուտ	15	302,836
Այլ ֆինանսական հոդվածներ	16	61,166
Տարվա արդյունք մինչև հարկումը	1,551,072	2,189,000
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	17	(454,675)
Տարվա արդյունք հարկումից հետո	1,424,740	1,734,325
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>		
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո	-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	1,424,740	1,734,325

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 73-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերահաշ- վարկված)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Տարվա արդյունք՝		
Մաշվածություն և ամորտիզացիա	1,551,072	2,189,000
Շահութահարկի գծով ծախս/փոխհատուցում	723,617	894,374
Պահուստներ	126,332	454,675
Շնորհներից եկամուտ	(45,480)	73,256
Ֆինանսական եկամուտ	(3,174,447)	(3,950,687)
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(363,151)	(302,836)
Գործառնական արդյունք մախքան շրջանառու կապիտալի փոփոխությունները	38,118	(61,166)
	(1,143,939)	(703,384)
Պաշարների փոփոխություն	(413,140)	(44,595)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(421,519)	189,162
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	(489,464)	(12,413)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	(2,468,061)	(571,230)
Վճարված շահութահարկ	(203,298)	(115,000)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	(2,671,359)	(686,230)

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2017թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի (վերահաշ- վարկված)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Կարճաժամկետ ավանդներ բանկերում	(601,158)	(1,599,356)
Ստացված տոկոսներ	7,655	29,422
Հիմնական միջոցների ձեռքբերում	(838,040)	(1,047,456)
Հիմնական միջոցների օտարում	227,752	221,831
Ներդրումային գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	(1,203,791)	(2,395,559)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շնորհներից մուտքեր	3,754,156	3,182,555
Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	3,754,156	3,182,555
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)	(120,994)	100,766
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	57,949	(92,378)
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեկազմի դրությամբ	718,637	710,249
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ	655,592	718,637

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 73-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: